

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը և Ռուսաստանի Դաշնության Կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր,

ղեկավարվելով 1993 թվականի հունվարի 11-ի՝ Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ռուսաստանի Դաշնության Կառավարության միջև բարձրագույն կրթության ոլորտում համագործակցության մասին Համաձայնագրով, 2011 թվականի հոկտեմբերի 24-ի՝ Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ռուսաստանի Դաշնության Կառավարության միջև հումանիտար ոլորտում համագործակցության մասին Համաձայնագրով և, ելնելով 1997 թվականի օգոստոսի 29-ի՝ Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ռուսաստանի Դաշնության Կառավարության միջև Երևան քաղաքում Ռուս-հայկական համալսարանի հիմնադրման և գործունեության պայմանների մասին Համաձայնագրի իրագործման կուտակած փորձից, փոփոխված և լրացված՝ 2003 թվականի ապրիլի 23-ի՝ Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ռուսաստանի Դաշնության Կառավարության միջև 1997 թվականի օգոստոսի 29-ի՝ Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ռուսաստանի Դաշնության Կառավարության միջև Երևան քաղաքում Ռուս-հայկական համալսարանի հիմնադրման և գործունեության պայմանների մասին Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ Համաձայնագրով (այսուհետ՝ Հիմնադիր համաձայնագիր),

նպատակ ունենալով ստեղծել երկու Կողմերի պետությունների ժողովուրդների կրթության և մշակույթի զարգացման գործում հետագա փոխգործակցության համար առավել բարենպաստ պայմաններ,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Կողմերը սույն Համաձայնագրով ամրագրում են Հիմնադիր համաձայնագրով ստեղծված Ռուս-հայկական համալսարանի (այսուհետ՝ Համալսարան) գործունեության պայմանները:

Հոդված 2

Համալսարանը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության համատեղ վարման բարձրագույն կրթության միջպետական կրթական հաստատություն:

Հոդված 3

Սույն Համաձայնագրի իրականացման Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության լիազոր մարմիններն են՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը և Ռուսաստանի Դաշնության կրթության և գիտության նախարարությունը:

Հոդված 4

Համալսարանի հիմնական խնդիրներն են.

Ռուսաստանի Դաշնության օրենսդրության համաձայն հաստատված դաշնային պետական կրթական չափորոշիչներին և Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հաստատված պետական կրթական չափորոշիչների և ազգային-տարածաշրջանային բաղադրիչներին համապատասխան՝ հիմնական մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման համար կրթական ծառայությունների մատուցում,

լրացուցիչ կրթական ծրագրերի իրականացման համար կրթական ծառայությունների մատուցում,

գիտական և նորարական գործունեության իրականացում,

աջակցություն Կողմերի պետությունների գիտական և կադրային ներուժի զարգացմանը՝ լրացուցիչ մասնագիտական ծրագրերի իրագործման միջոցով,

անհատի կրթական կարիքների բավարարում, աջակցություն Կողմերի պետությունների ժողովուրդների մշակույթի, լեզուների, պատմական և ազգային ավանդույթների պահպանմանը, զարգացմանը և փոխհարստացմանը:

Համալսարանի խնդիրներն իրականացվում են կրթության և գիտության բնագավառում առաջավոր տեխնոլոգիաների կիրառման, համաշխարհային լավագույն փորձի օգտագործման միջոցով:

Հոդված 5

Ուսուցումը Համալսարանում իրականացվում է ռուսերեն՝ հայերենի պարտադիր դասավանդմամբ:

Համալսարանը պայմաններ է ստեղծում շրջանավարտների կողմից հիմնական մասնագիտական հմտություններին հայերենով տիրապետելու ապահովման համար:

Հայաստանի Հանրապետության պետական կրթական չափորոշիչներին համապատասխան կրթական ծառայությունների իրականացման շրջանակներում ուսուցումը Համալսարանում իրականացվում է հայերեն՝ ռուսերենի պարտադիր խորացված ուսուցմամբ:

Ուսումնառողների կարիքները բավարարելու նպատակով Համալսարանը առանձին հիմնական մասնագիտական կրթական ծրագրերով կարող է իրականացնել ուսուցում օտար լեզուներով՝ Կողմերի պետությունների օրենսդրություններին համապատասխան:

Համալսարանի լիցենզավորումը և կրթական գործունեության պետական հավատարմագրումն իրականացվում են Կողմերի պետությունների օրենսդրություններին համապատասխան:

Գործավարությունը Համալսարանում իրականացվում է ռուսերեն:

Հոդված 6

Համալսարանի կողմից օգտագործվող սույն Համաձայնագրով նախատեսված գործունեությունը իրականացնելու նպատակով Հայկական կողմի՝ որպես ներդրում տրամադրված շենքերը, շինությունները, կառույցները եւ անշարժ գույքի այլ օբյեկտները,

բացառությամբ հողամասերի, հանդիսանում են Համալսարանի սեփականությունը: Նշված սեփականությունը նախատեսված է բացառապես Համալսարանի գործունեության ապահովման համար:

Սույն Համաձայնագրով նախատեսված Համալսարանի գործունեության իրականացման համար անհրաժեշտ հողամասերը տրվում են Համալսարանին մշտական (անժամկետ) օգտագործման իրավունքով՝ որպես Հայկական կողմի ներդրում:

Կողմերը աջակցում են Համալսարանի նյութատեխնիկական բազայի զարգացմանը, որն անհրաժեշտ է իր՝ սույն Համաձայնագրի 4-րդ հոդվածում նշված հիմնական խնդիրների իրականացման համար:

Շենքերի, շինությունների և այլ անշարժ գույքի արժեքի ավելացումը ցանկացած աղբյուրի հաշվին կատարված կապիտալ ներդրումների՝ այդ թվում Կողմերի պետությունների լրացուցիչ ներդրումների հաշվին, արտացոլվում է Համալսարանի բալանսում:

Հոդված 7

Կողմերի պետությունների լիազոր մարմինները յուրաքանչյուր տարի սահմանում են Համալսարանին՝ համապատասխանաբար Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության բյուջեներից հատկացվող սուբսիդիաների ծավալները ընթացիկ ֆինանսական տարվա և պլանային ժամանակահատվածի համար:

Համալսարանը կարող է մասնակցել Հայաստանի Հանրապետությունում՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին և Ռուսաստանի Դաշնությունում՝ դաշնային բյուջեի բյուջետային հատկացումների հաշվին, ինչպես նաև Կողմերի պետությունների, օտարերկրյա պետությունների, միջազգային կազմակերպությունների ու հիմնադրամների տարբեր հումանիտար և գիտական հիմնադրամների միջոցների հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական ծրագրերի և նախագծերի իրականացմանը:

Հոդված 8

Կողմերը կաջակցեն Համալսարանի ներգրավմանը գիտության, մշակույթի եւ կրթության բնագավառում Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության մասնակցությամբ համագործակցության միջազգային ծրագրերի, ինչպես նաև Ռուսաստանի Դաշնության դաշնային նպատակային ծրագրերի եւ գիտության, մշակույթի ու կրթության բնագավառներում Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության այլ պետական ծրագրերի իրականացմանը, այդ ծրագրերին մասնակցելու հնարավորություն ապահովելով Հայաստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության և այլ երկրների քաղաքացիներ հանդիսացող Համալսարանի ուսումնառուներին, գիտամանկավարժական աշխատողներին և աշխատակիցներին:

Կողմերը կնպաստեն Համալսարանի և Կողմ պետությունների ու այլ երկրների կրթական կազմակերպությունների միջև համագործակցության զարգացմանը, Համալսարանի ուսումնառուների, մանկավարժական, գիտական և այլ աշխատակիցների միջազգային ակադեմիական շարժը, օտարերկրյա պետությունների քաղաքացիների ներգրավմանը Համալսարանում ուսումնառելուն:

Հոդված 9

Կողմ պետությունների լիազոր մարմինները Համալսարանի նյութատեխնիկական, ֆինանսական և ուսումնամեթոդական գործունեության ապահովման հարցերի լուծման համար ձևավորում են հայ-ռուսական համատեղ մշտական աշխատանքային խումբ:

Հայ-ռուսական համատեղ մշտական աշխատանքային խմբի նիստերն անց են կացվում առնվազն տարին մեկ անգամ:

Հոդված 10

Համալսարանի գործունեությունը կարգավորվում է իր Կանոնադրությամբ, որը հաստատվում է սահմանված կարգով՝ Կողմերի պետությունների լիազոր մարմինների կողմից:

Համալսարանի կառավարման բարձրագույն կոլեգիալ մարմինը աշխատակիցների և ուսումնառողների Ընդհանուր ժողովն է (Համաժողով), որի կառուցվածքը, ձևավորման կարգը, լիազորությունների ժամկետը սահմանվում են Համալսարանի Կանոնադրությամբ:

Համալսարանի գործունեության ընդհանուր կառավարումն իրականացնում է կառավարման կոլեգիալ մարմինը՝ Գիտական խորհուրդը, որի կառուցվածքը, ձևավորման կարգը, լիազորությունների ժամկետը սահմանվում են Համալսարանի Կանոնադրությամբ:

Հոդված 11

Համալսարանի ռեկտորն ընտրվում է Համալսարանի աշխատակիցների և ուսումնառողների Ընդհանուր ժողովի (Համաժողով) կողմից՝ Կողմերի պետությունների լիազոր մարմիններում ատեստավորում անցած թեկնածուների կազմից և հաստատվում է Կողմ պետությունների լիազոր մարմինների համատեղ որոշմամբ:

Համալսարանի Գիտական խորհրդի որոշմամբ կարող է հիմնադրվել Համալսարանի Նախագահի պաշտոն:

Համալսարանի խնդիրների լուծմանը աջակցություն է ցուցաբերում Հոգաբարձուների խորհուրդը, որի կառուցվածքը, ձևավորման կարգը և լիազորությունների ժամկետը սահմանվում են Համալսարանի Կանոնադրությամբ:

Հոդված 12

Համալսարան ընդունվելու իրավունքից օգտվում են Հայաստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության և այլ պետությունների՝ համապատասխան մակարդակի կրթություն ունեցող քաղաքացիները, անկախ ազգությունից, սեռից, ռասայից, լեզվից, ծագումից, բնակության վայրից, սոցիալական և գույքային դրությունից, ինչպես նաև այլ հանգամանքներից՝ Կողմերի պետությունների օրենսդրություններին համապատասխան:

Համալսարան ընդունելության կարգը սահմանվում է Համալսարանի կողմից՝ Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության լիազոր մարմինների նորմատիվ իրավական ակտերի համաձայն:

Հոդված 13

Յուրաքանչյուր տարի Ռուսաստանի Դաշնության դաշնային բյուջեի բյուջետային հատկացումների հաշվին ուսումնառության ընդունված ուսանողների թվաքանակը սահմանվում է Ռուսաստանի Դաշնության Կրթության և գիտության նախարարության

կողմից՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կրթության և գիտության նախարարության հետ Համալսարանի համաձայնեցրած հայտը:

Քաղաքացիների ընդունելության հսկիչ թվերը և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին ուսումնառող ուսանողների թվաքանակը սահմանվում են Հայաստանի Հանրապետության Կրթության և գիտության նախարարության կողմից՝ հիմք ընդունելով Ռուսաստանի Դաշնության Կրթության և գիտության նախարարության հետ Համալսարանի համաձայնեցրած հայտը:

Համալսարանը վճարովի հիմունքներով կրթություն է իրականացնում՝ Կողմ պետությունների օրենսդրությունների համաձայն:

Համալսարանում կրթությունն ավարտած անձանց տրվում են կրթության և (կամ) որակավորման մասին Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության փաստաթղթեր՝ համաձայն Կողմ պետությունների օրենսդրությունների:

Հոդված 14

Կողմերի պետությունների լիազոր մարմինների համապատասխան թույլտվությամբ Համալսարանի բազայի վրա կարող են ստեղծվել մասնագիտական խորհուրդներ՝ թեկնածուական եւ դոկտորական ատենախոսությունների պաշտպանության համար:

Հոդված 15

Կողմերը պարտավորվում են համատեղ ճանաչել Համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի ներկայացուցիչների և գիտական աշխատողների գիտությունների թեկնածուի և գիտությունների դոկտորի գիտական աստիճանները, պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումները՝ նպատակ ունենալով պահպանել նրանց իրավունքները Համալսարանի հետ հարաբերությունների շրջանակում, համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության և Ռուսաստանի Դաշնության օրենսդրության, նմանատիպ աշխատակիցների՝ Համալսարանի հետ աշխատանքային հարաբերությունների ձևակերպման պարագայում:

Հոդված 16

Հայկական կողմը ձեռնարկում է համապատասխան միջոցներ՝ Համալսարանի տարածքում իրավակարգի պահպանման ուղղությամբ:

Հոդված 17

Սույն Համաձայնագրի մեկնաբանման և (կամ) կիրառման ժամանակ Կողմերի միջև ծագող ցանկացած վեճ և տարաձայնություն կարգավորվում է Կողմերի միջև խորհրդակցությունների կամ բանակցությունների միջոցով:

Հոդված 18

Կողմերը կարող են սույն Համաձայնագրի մեջ կատարել փոփոխություններ, որոնք ձևակերպվում են առանձին արձանագրություններով:

Հոդված 19

Սույն Համաձայնագիրը կնքվում է անորոշ ժամկետով և ուժի մեջ է մտնում դիվանագիտական ուղիներով նրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ՝ Կողմերի ներպետական ընթացակարգերի կատարման մասին վերջին գրավոր ծանուցումը ստանալու ամսաթվից:

Սույն Համաձայնագրի գործողությունը դադարեցվում է Կողմերից մեկի՝ դիվանագիտական ուղիներով մյուս Կողմին սույն Համաձայնագիրը դադարեցնելու իր մտադրության մասին տեղեկացնելու օրվանից վեց ամիս անց:

Հոդված 20

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել 1997 թվականի օգոստոսի 29-ի՝ Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ռուսաստանի Դաշնության Կառավարության միջև Երևան քաղաքում Ռուս-հայկական համալսարանի հիմնադրման և գործունեության պայմանների մասին Համաձայնագրի 1-ին հոդվածի 2-րդ պարբերության և 2-ից 13-րդ հոդվածների գործողությունը, փոփոխված և լրացված՝ 2003 թվականի ապրիլի 23-ի՝ Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ռուսաստանի Դաշնության Կառավարության միջև 1997 թվականի օգոստոսի 29-ի՝ Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ռուսաստանի Դաշնության Կառավարության միջև Երևան քաղաքում Ռուս-հայկական համալսարանի հիմնադրման և գործունեության պայմանների մասին համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Համաձայնագրով:

Կատարված է Երևան քաղաքում, 2015 թվականի մայիսի 14-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն և ռուսերեն, ընդ որում երկու տեքստերն էլ իրավահավասար են:

Հայաստանի Հանրապետության

Կառավարության կողմից՝



Ռուսաստանի Դաշնության

Կառավարության կողմից՝

